

ԽՄԵԼՈՒ ԶՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ, ԶՐԱՆԵՌ-ԱՅՄԱՆ ԵՎ ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԾԱՌ-ԱՅՈՒԹ-ՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՅՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԵԹՈԴ-ԱԲԱՆՈՒԹ-ՅՈՒՆ

Սույն մեթոդաբանությունը սահմանում է խմելու ջրի մաքրակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայություններ (այսուհետև՝ Ծառայություններ) մաքուրցող ընկերությունների (այսուհետև՝ Ընկերություններ) կողմից մաքուրցվող ծառայությունների սակագնային համակարգի մշակման սկզբունքները:

Սույն մեթոդաբանությունը չի կիրառվում այն Ընկերությունների նկատմամբ, որոնց համար ջրային համակարգի օգտագործման իրավունքի փոխանցման արդյունքում փրված ջրային համակարգի օգտագործման թույլտվությամբ սահմանվել են սակագների սահմանման և վերանայման այլ սկզբունքներ:

1. Սակագնային համակարգի մշակման փուլերը

- 1.1 Սակագնային համակարգի մշակումը իրականացվում է հետևյալ փուլերով՝
- ա) Ընկերությունների փարեկան անհրաժեշտ հասույթների որոշում,
 - բ) ծախսերի վերլուծություն և սպառողներին ու սպառողական խմբերին մաքուրցվող ծառայությունների արժեքի որոշում,
 - գ) սակագների կառուցվածքների մշակում և սակագնային դրույքների որոշում:

2. Անհրաժեշտ հասույթի որոշումը

2.1 Սակագների մշակման գործընթացն իրականացնելիս Ընկերություններն առաջնորդվում են անհրաժեշտ փարեկան հասույթի ապահովման սկզբունքով, համաձայն որի անհրաժեշտ հասույթը բավարարում է իրականացնելու Ընկերությունների հուսալի, անվտանգ և շարունակական գործունեության համար պահանջվող բոլոր գործառնական ծախսերը և ապահովելու ներգրավված կապիտալի դիմաց ողջամիտ շահույթը:

Անհրաժեշտ հասույթը (ԱՆ) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ԱՆ} = \text{ԹԾ} + \text{Մ} + \text{ԹՇ} - \text{ԱԵ},$$

որտեղ՝

ԹԾ – թույլատրելի փարեկան ծախսերն են,

Մ – հիմնական միջոցների փարեկան մաշվածության գումարն է,

ԹՇ – թույլատրելի շահույթն է,

ԱԵ - այլ եկամուտներն են:

2.2 Թույլատրելի ծախսերում (ԹԾ) ներառվում են սակագների հաշվարկման 12 ամսյա ժամանակաշրջանի (այսուհետ՝ հաշվարկային փարի) ընթացքում Ծառայություններ մատուցելու համար կատարվող ողջամիտ և անհրաժեշտ ընթացիկ ծախսերը, այդ թվում՝

ա) շահագործման և պահպանման ծախսերը, այդ թվում՝ աշխատավարձերը, նպաստները, ինչպես նաև ջրային համակարգերի շահագործման և ընթացիկ վերանորոգման համար պահանջվող ծախսերը,

բ) հարկերը (բացի շահութահարկից և ավելացված արժեքի հարկից) և Նայասփանի Նանրապեպության օրենսդրությամբ սահմանված փուրքերն ու պարտադիր այլ վճարները,

գ) Նայասփանի Նանրապեպության օրենսդրությամբ նախատեսված հիմնավորված և անհրաժեշտ այլ ծախսերը,

դ) Նայասփանի Նանրապեպության կառավարությունից կամ Նայասփանի Նանրապեպության կառավարության երաշխավորմամբ ստացված արտոնյալ վարկերի սպասարկման – մարման հետ կապված ծախսերը:

Ծառայությունների մատուցման հետ չառնչվող ծախսերը չեն ընդգրկվում անհրաժեշտ հասույթի հաշվարկում:

2.3 Նիմնական միջոցների փարեկան մաշվածության (Մ) գումարները հաշվարկվում են գծային մեթոդով՝ ելնելով Ծառայությունների մատուցման համար Նայասփանի Նանրապեպության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Նանձնաժողով) կողմից օգտակար և օգտագործվող ճանաչված հիմնական միջոցների սկզբնական (ձեռքբերման) արժեքից կամ ֆինանսական հաշվեպվություններում դրան փոխարինող այլ գումարից և օգտակար ծառայության ժամանակահատվածից:

2.4 Թույլատրելի է համարվում շահույթի (ԹՇ) այն մեծությունը, որն Ընկերություններին հնարավորություն է տալիս կատարել ակտիվների ֆինանսավորման համար ներգրավված կապիտալի հետ կապված պարտավորությունները և չխոչընդոտել Ընկերությունների զարգացման համար անհրաժեշտ լրացուցիչ սեփական կամ փոխառու միջոցների ներգրավումը:

Ընկերության ակտիվների ֆինանսավորման աղբյուրներից, պայմաններից և հնարավորություններից ելնելով՝ թույլատրելի շահույթի որոշման համար օգտագործվում են հետևյալ եղանակները.

ա) գույք ակտիվների շահույթի նորմայի եղանակ,

բ) անհրաժեշտ ֆինանսական ծախսերի հատուցման եղանակ:

2.5 Զույգ ակտիվների շահույթի նորմայի եղանակի կիրառման դեպքում

թույլատրելի շահույթը հաշվարկվում է որպես շահույթի հաշվարկման բազայի (ՇԲ) – թույլատրելի շահույթի նորմայի (ՇՆ) արտադրյալ՝

$$\Theta\text{Շ} = \text{ՇԲ} * \text{ՇՆ}:$$

Շահույթի հաշվարկման բազա է հանդիսանում Ընկերության գույք ակտիվների արժեքը, որը հաշվարկվում է հետ–յալ բանաձևով՝

$$\text{ՇԲ} = \text{ՕՕՈՆԱ} - \text{ԿՄ} + \text{ՇԿ},$$

որտեղ՝

ՕՕՈՆԱ - Ծառայությունների մատուցման համար Նանձնաժողովի կողմից օգտակար – օգտագործվող ճանաչված ոչ ընթացիկ ակտիվների, այդ թվում՝ հողի, շենքերի, կառուցվածքների և սարքավորումների, մեքենա-մեխանիզմների և այլ նյութական ակտիվների արժեքն է,

ԿՄ - ոչ ընթացիկ ակտիվների կուտակված մաշվածությունն է, որը հաշվարկվում է սույն մեթոդաբանության 2.3 կետով սահմանված սկզբունքով:

ՇԿ – շրջանառու կապիտալի՝ Նանձնաժողովի կողմից թույլատրելի համարվող մեծությունն է, որի մեջ մտնում են Ծառայությունների իրականացման գծով Ընկերությունների ընթացիկ պարտավորությունների կատարման համար պահանջվող կանխիկ միջոցները, նյութերը և պահեստամասերը:

Շահույթի թույլատրելի նորման Ընկերության փոխառու և սեփական կապիտալի միջին արժեքն է՝ հաշվարկված կապիտալի կառուցվածքում նրանց բաժնեմասերին համապատասխան՝

$$\text{ՇՆ} = \frac{U\text{Կ} * r_u + \sum_i \Phi\text{Կ}_i * r_{\Phi_i}}{U\text{Կ} + \sum_i \Phi\text{Կ}_i},$$

որտեղ՝

UԿ – r_u – համապատասխանաբար սեփական կապիտալի մեծությունն է հաշվարկային տարվա սկզբում և նրա թույլատրելի (ողջամիտ) շահույթի նորման մինչև հարկումը,

$\Phi\text{Կ}_i$ – r_{Φ_i} – համապատասխանաբար i -րդ փոխառության չմարված մնացորդն է հաշվարկային տարվա սկզբում և նրա սպասարկման արժեքը:

Այս եղանակի կիրառման դեպքում ներգրավված կապիտալի նկատմամբ պարտավորություններն ամբողջությամբ իրականացվում են շահույթի և մաշվածության գումարների հաշվին: Նանձնաժողովի կողմից հաստատված ներդրումային ծրագրերի համաձայնեցման կարգի պահանջներին համապատասխան կատարված ներդրումները հաշվի են առնվում դրանց իրականացումից հետո՝ շահույթի և մաշվածության բազայում ներառման միջոցով:

2.6 Շահույթի և մաշվածության հաշվարկման բազայում, ինչպես նաև շահույթի թույլատրելի նորմայի հաշվարկում չեն ընդգրկվում այն ներդրումները, որոնք

իրականացվում են դրամաշնորհների, Նայասպանի Նանրապետության կառավարությունից կամ Նայասպանի Նանրապետության կառավարության երաշխավորմամբ ստացված արտոնյալ վարկերի հաշվին:

2.7 Անհրաժեշտ ֆինանսական ծախսերի հապուցման եղանակի կիրառման դեպքում թույլատրելի շահույթը հաշվարկվում է՝ հաշվի առնելով Ընկերության փաստացի ֆինանսական պարտավորությունները և սույն մեթոդաբանության 2.2 կետում նշված թույլատրելի ծախսերի կազմում չընդգրկված այն լրացուցիչ ծախսերը, որոնք անհրաժեշտ են ջրային համակարգի պահպանման և համալրման համար: Նաշվի առնելով, որ այդպիսի ծախսերի ֆինանսավորման աղբյուր են նաև մաշվածության գումարները, անհրաժեշտ հասույթի հաշվարկում մաշվածության և շահույթի փոխարեն ընդգրկվում են հետևյալ մեծությունները՝

ա) Նանձնաժողովի հետ համաձայնեցված փոխառու միջոցների սպասարկման (տոկոսավճարներ) և մարման ծախսերը, որոնք որոշվում են Ընկերության առկա պարտքերի սպասարկման – մարման ժամանակացույցից,

բ) փոխառու միջոցներով և շահագործման ծախսերով չֆինանսավորվող քարեկան կապիտալ ծախսերը, որոնք Ընկերությունը կատարում է հիմնական միջոցների համալրման համար՝ Ծառայությունների անխափանությունն ապահովելու նպատակով, – որի ֆինանսավորումը պետք է իրականացվի փոխառված հասույթից:

Նշված ծախսերը ներառվում են անհրաժեշտ հասույթի կազմում՝ Նանձնաժողովի հետ նախապես համաձայնեցված ներդրումային ծրագրերում նախատեսված չափերով:

2.8 Այլ եկամուտները ներառում են Ծառայությունների մատուցման համար ներգրավված ակտիվների այլ նպատակներով օգտագործումից (օտարումից) ստացվող լրացուցիչ հասույթների և դրանց պարճառով առաջացող լրացուցիչ ծախսերի արժեքները:

2.9 Անհրաժեշտ հասույթի հաշվարկում ընդգրկված ծախսերի որոշման համար հիմք են հանդիսանում հաշվարկային տարվան նախորդող 12-ամսյա ժամանակաշրջանում Ծառայությունների մատուցման համար Ընկերությունների կողմից կատարված փաստացի ծախսերը, որոնց վերաբերյալ գոյություն ունի սպառիչ տեղեկատվություն:

Նշված փաստացի ծախսերը ճշգրտվում են՝ հաշվի առնելով սակագնային հայտի ներկայացման պահին արդեն հայտնի և նոր սակագնի գործողության ընթացքում կանխատեսվող ողջամիտ փոփոխությունները:

3. Ծախսերի վերլուծություն և Ծառայությունների արժեքի որոշում

3.1 Սակագների մշակման հաջորդ փուլը ծախսերի վերլուծությունն է, որի միջոցով որոշվում է փարբեր սպառողների խմբերի մասնաբաժինը ընդհանուր ծախսերում – կապարվում այդ ծախսերի բաշխումը բոլոր սպառողական խմբերի միջև:

Ծախսերի վերլուծությունը բաղկացած է հետևյալ քայլերից՝

- ա) ծախսերի փարանջափում ըստ գործառույթների,
- բ) ծախսերի դասակարգում,
- գ) սպառողների խմբավորում,
- դ) բաշխման գործակիցների որոշում և ծախսերի բաշխում:

3.2 Ծառայությունների մատուցման համար Ընկերությունների կողմից իրականացվող ծախսերի յուրաքանչյուր փարբ բաժանվում է հետևյալ ֆունկցիոնալ փիրույթների միջև՝ ջրառ (կապրած), մայրուղային ջրափարներով ջրի փեղափոխում, ջրի բաշխում – կարգավարում, ջրահեռացում և կեղտաջրերի մաքրում:

3.3 Ծախսերը դասակարգվում են հաստատում, փոփոխական և սպառողների սպասարկման ծախսերի:

Նաստատում են այն ծախսերը, որոնք Ընկերությունը կափարում է անկախ մատակարարված ջրի և սպառողների քանակից: Դրանք հիմնականում Ընկերության հիմնական միջոցների սպասարկման հետ կապված ծախսերն են և այլ ծախսերը, որոնք պետք է հատուցվեն անկախ սպառված ջրի քանակից (Շ_Չ):

Փոփոխական են այն ծախսերը, որոնք փոփոխվում են՝ կախված խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման ու կեղտաջրերի մաքրման ծավալներից: Այդ ծախսերն ընդգրկում են գնովի ջրի արժեքը, պոմպակայաններում ծախսված էլեկտրաէներգիայի արժեքը և ջրի քանակի հետ կապված այլ ծախսերը (Շ_Վ):

Սպառողների սպասարկման ծախսերն անմիջականորեն կապված են սպառողների սպասարկման հետ և ընդգրկում են ջրաչափերի ցուցմունքները վերցնելու, հաշիվները ներկայացնելու և վճարները հավաքագրելու ծախսերը (Շ_Ս):

3.4 Սպառողների խմբավորումն Ընկերություններն իրականացնում են այնպես, որ նույն խմբում ընդգրկվեն սպառողներ, որոնց սպասարկումը գրեթե միանման ծախսային բեռնվածք է ստեղծում: Սպառողների խմբավորման ժամանակ հաշվի են առնվում ջրամատակարարման ծավալը և պահանջվող ելքը, փեսակը (ինքնահոս, թե մեխանիկական), ջրի կեղտոտման աստիճանը, հաշվառման փեսակը և այլն:

Խմբավորման ժամանակ փարանջափում են մանրածախ և մեծածախ Ծառայություններից օգտվող սպառողները (սպառողական խմբերը): Մեծածախ են այն Ծառայությունները, որոնք մատուցվում են Ծառայություններ մատուցող ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ունեցող այլ անձանց կամ համայնքներին:

3.5 Դասակարգված ծախսերը բաշխման գործակիցների միջոցով բաշխվում են սպառողական խմբերի միջև: Գործակիցները որոշվում են այնպես, որ հնարավորինս ճշգրիտ արփացուլեն սպառողական խմբերի ծախսերի առաջացման պատճառները:

Նաստրատուն ծախսերի բաշխման գործակիցները որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$k_{Q_i} = \frac{Q_i}{\sum_i Q_i},$$

որպետև՝

k_{Q_i} - i -րդ սպառողական խմբի հաստատուն ծախսերի բաշխման գործակիցն է,

Q_i - i -րդ սպառողական խմբի՝ փարվա ընթացքում առավելագույն սպառումով ամսվա միջին օրական սպառումն է:

Փոփոխական ծախսերի բաշխման գործակիցները որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$k_{V_i} = \frac{V_i}{\sum_i V_i},$$

որպետև՝

k_{V_i} - i -րդ սպառողական խմբի փոփոխական ծախսերի բաշխման գործակիցն է,

V_i - i -րդ սպառողական խմբի կողմից խմելու ջրի սպառման կամ ջրահեռացման փարեկան ծավալն է:

Սպառողների սպասարկման ծախսերի բաշխման գործակիցները որոշելիս՝ նկատի ունենալով, որ փարբեր սպառողական խմբերում ընդգրված սպառողների սպասարկումն Ընկերությունում փարբեր ծախսեր է առաջացնում և որպես միավոր ընդունելով մեկ բնակիչ-սպառողը, մնացած խմբերի սպառողների համար կիրառվում են «բերման» գործակիցներ, որոնք այս կամ այն ճշտությամբ արտացոլում են այդ փարբերությունները:

Նաշվի առնելով նշվածը՝ սպառողների սպասարկման ծախսերի բաշխման գործակիցները որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$k_{n_i} = \frac{\alpha_i n_i}{\sum_i \alpha_i n_i},$$

որպետև՝

n_i - i -րդ սպառողական խմբի բաժանորդների քանակն է,

α_i - i -րդ սպառողական խմբի մեկ սպառողի բնակիչ-սպառողին «բերման» գործակիցն է, որը ցույց է տալիս, թե փվյալ խմբի մեկ սպառողի սպասարկման ծախսերը մոտավորապես քանի բնակիչ-սպառողի սպասարկման ծախսերին են համարժեք:

Դասակարգված ծախսերի բաշխումը կատարվում է սույն ենթակետով որոշված բաշխման գործակիցների հիման վրա՝ հետևյալ բանաձևերով՝

$$\mathcal{O}_{Q_i} = k_{Q_i} * \mathcal{O}_Q,$$

$$\mathcal{O}_{V_i} = k_{V_i} * \mathcal{O}_V,$$

$$\bar{\sigma}_{ni} = k_{ni} * \bar{\sigma}_n,$$

որպեղ`

$\bar{\sigma}_Q$, $\bar{\sigma}_V$ – $\bar{\sigma}_n$ - համապատասխանաբար հասարարուն, փոփոխական և սպառողների սպասարկման ծախսերն են,

$\bar{\sigma}_{Qi}$, $\bar{\sigma}_{Vi}$ – $\bar{\sigma}_{ni}$ - i -րդ սպառողական խմբի կողմից հարուցվող համապատասխան ծախսերի մասնաբաժիններն են:

4. Սակագների մշակումը

4.1 Սակագների մշակումը ենթադրում է մանրաձախ և մեծաձախ սակագների հեղ-յալ տեսակների հաշվարկը`

ա) ջրամարակարարման սակագներ,

բ) ջրահեռացման սակագներ,

գ) կեղտաջրերի մաքրման սակագներ:

4.2 Սպառողական փարբեր խմբերի համար սակագների կառուցվածքը կարող է լինել փարբեր, բայց նրանք պեղք է ընտրվեն այնպես, որ առավելագույն չափով համապատասխանեն ծախսերի ուսումնասիրության արդյունքում որոշված փարբեր սպառողական խմբերի ծառայությունների մարուցման ծախսերին:

Ծառայության տեսակից, նրա տեխնիկական ցուցանիշներից և հաշվառման հնարավորություններից կախված` սպառողական փարբեր խմբերի համար կարող են կիրառվել մեկ կամ բազմադրույք սակագներ: Սակագնային դրույքների հաշվարկի հիմք են հանդիսանում փարբեր սպառողական խմբերի միջև բաշխված ծախսերը ($\bar{\sigma}_{Vi}$, $\bar{\sigma}_{Qi}$ – $\bar{\sigma}_{ni}$):

4.3 Սակագնային դրույքների հաշվարկներն իրականացվում են`

ա) միադրույք սակագնային համակարգում,

բ) երկդրույք սակագնային համակարգում:

Ընկերությունների կողմից կարող են առաջարկվել սակագնի կառուցվածքի և սակագնային դրույքի հաշվարկների այլ մոտեցումներ:

4.4 Միադրույք սակագնային համակարգում տվյալ սպառողական խմբի սակագնային դրույքը որոշվում է հեղ-յալ բանաձ-ով`

$$U_i = \frac{\dot{I}_{Qi} + \dot{I}_{Vi} + \dot{I}_{ni}}{\hat{\Delta} \theta_i},$$

որպեղ`

$\dot{Q}U_i$ - տվյալ սպառողական խմբին մարուցվող ծառայությունները չափելու համար օգտագործվող հաշվարկային մեծությունն է: Եթե տվյալ խմբի բոլոր սպառողների մոտ տեղադրված են ջրաչափական սարքեր, ապա այդ խմբի համար մարուցված ծառայությունների չափման միավոր է հանդիսանում ջրի մեկ խորանարդ

մտարը – այդ դեպքում ՉՄՔ-ն հանդիսանում է սպառողների տվյալ խմբի կողմից տարվա ընթացքում ծախսվող ջրի ծավալը:

Այդ խմբի սպառողներին մատուցված ծառայությունների դիմաց ամսական վճարը (ԱՎ) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$ԱՎ = U_i * V_w,$$

որտեղ՝ V_w - ջրաչափական սարքերով հաշվառված ամսական ջրի ծախսն է:

Ջրաչափական սարքերի բացակայության կամ ընդհանուր բակային ծորակներից օգտվելու դեպքերում միադրույք սակագինը հաստատագրված ամսական բաժանորդային վճարն է: Նման դեպքերում ծառայության չափման միավորը բաժանորդն է կամ բնակիչը, – ՉՄՔ-ն տվյալ խմբի բաժանորդների կամ բնակիչների քանակն է:

Եթե նույն սպառողական խմբում ընդգրկված են ջրաչափական սարքեր ունեցող և չունեցող սպառողներ (օրինակ, բնակչության խմբում), ապա սակագնային հաշվարկից առաջ տվյալ խմբի ծախսերը ($\mathcal{D}_i = \mathcal{D}_{oi} + \mathcal{D}_{vi} + \mathcal{D}_{ni}$) բաժանվում են տարբեր ջրամատակարարման կամ հաշվառման համակարգ ունեցող սպառողների ենթախմբերի միջև, և միայն բաշխված ծախսերով հաշվարկվում ամսական և բաժանորդային վճարները:

Ծախսերի բաշխումը կարելի է իրականացնել բաշխման գործակիցների միջոցով, որոնք որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$k_{ij} = \frac{V_{ij}}{V_i},$$

որտեղ՝

k_{ij} – i -րդ խմբի j -րդ ենթախմբի բաշխման գործակիցն է,

V_{ij} - i -րդ խմբի j -րդ ենթախմբի տարեկան օգտագործվող ջրի ծավալն է,

V_i - i -րդ խմբի բոլոր սպառողների տարեկան գումարային օգտագործված ջրի ծավալն է:

Ենթախմբերի տարեկան օգտագործվող ջրի ծավալները Ընկերությունները որոշում են համապատասխան հետազոտությունների միջոցով:

Բաշխման գործակիցների որոշման համար Ընկերությունները կարող են կիրառել Նանձնաժողովի հետ համաձայնեցված այլ մոտեցումներ:

4.5 Երկդրույք սակագնային համակարգում սահմանվում են սակագնային հետ-յալ դրույքները՝

ա) օգտագործված ջրի քանակի դրույք,

բ) ամսական բաժանորդային վճար:

Օգտագործված ջրի քանակի սակագնային դրույքը (U_{rvi}) յուրաքանչյուր սպառողական խմբի համար որոշվում է տվյալ խմբին վերագրված փոփոխական

ծախսերի (\mathcal{D}_{vi}) – այդ խմբի սպառողների կողմից փարվա ընթացքում օգտագործվող ջրի քանակի (V_i) հարաբերությամբ՝

$$\hat{e}_{vi} = \frac{\dot{I}_{vi}}{V_i} :$$

Ամսական բաժանորդային վճարը կարող է լինել երկու տեսակ՝

ա) մեկ բաժանորդի ամսական հաստատագրված բաժանորդային վճար (դրամ/ամիս), որը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\hat{v}_i = \frac{\dot{I}_{Qi} + \dot{I}_{ni}}{n_i},$$

որտեղ՝ n_i – փվյալ խմբի բաժանորդների քանակն է:

Ամսական հաստատագրված բաժանորդային վճարի դրույքը կարող է օգտագործվել բնակչության և օրական փոքր սպառում ունեցող այլ սպառողների համար: Այս դեպքում երկդրույք սակագնային համակարգում Շառայությունների դիմաց սպառողների ամսական վճարը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$ԱՎ = ԲՎ + Մ\mathcal{R}_v * V_{ամս},$$

որտեղ՝ $V_{ամս}$ – փվյալ սպառողի ամսական ջրի ծախսն է.

բ) օրական առավելագույն սպառումից (Q_{op}^{max}) կախված ամսական բաժանորդային վճար: Օրվա մեկ խորանարդ մեկր առավելագույն սպառման համար սակագնային դրույքը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\mathcal{R}_{Qi} = \frac{\mathcal{D}_{Qi} + \mathcal{D}_{ni}}{12 \cdot Q_{op}^{max}} \quad (\text{դրամ/ամիս}),$$

որտեղ՝ Q_{op}^{max} – i -րդ սպառողական խմբի սպառողների օրական առավելագույն սպառումն է:

Այս դեպքում ամսական բաժանորդային վճարը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$ԱՎ = \mathcal{R}_Q * Q_{op}^{max} + \mathcal{R}_v * V_{ամս},$$

որտեղ՝ Q_{op}^{max} – փվյալ սպառողի օրական առավելագույն սպառումն է: